Հավելված 1
«__» «__» 2021 թ. կնքված
Թիվ 1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
I Գնային ցանկ

Չափաբաժնի համար	Չափաբաժնի /ծառայության/ անվանում և բնութագիր	Գրավոր /վարձատրության չափ (1 թարգմանչական էջ)	Բանավոր /վարձատրության չափ (1 ժամ)
1	թարգմանություն՝ *հայերենից հունարեն, հունարենից հայերեն*	*	13500
2	թարգմանություն՝ *հայերենից լեհերեն, լեհերենից հայերեն*	*	14500
3	թարգմանություն՝ *հայերենից բուլղարերեն, բուլղարերենից հայերեն*	*	15000
4	թարգմանություն՝ *հայերենից հոլանդերեն, հոլանդերենից հայերեն*	*	20000
5	թարգմանություն՝ *հայերենից ճապոներեն, ճապոներենից հայերեն*	15000	20000
6	թարգմանություն՝ *հայերենից ռումիներեն, ռումիներենից հայերեն*	19000	22000
7	թարգմանություն՝ *հայերենից սերբերեն, սերբերենից հայերեն*	18000	20000
8	թարգմանություն՝ *հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն*	19000	23000
9	թարգմանություն՝ *սլովեներենից հայերեն, հայերենից սլովեներեն*	18000	20000
10	թարգմանություն՝ *հայերենից ուկրաիներեն, ուկրաիներենից հայերեն*	*	10000
11	թարգմանություն՝ *հայերենից փանջաբի, փանջաբիից հայերեն*	14500	18000
12	թարգմանություն՝ *հայերենից սլովակերեն, սլովակերենից հայերեն*	11500	14000
13	թարգմանություն՝ *հայերենից լիտվերեն, լիտվերենից հայերեն*	15000	18000
14	թարգմանություն՝ *հայերենից ուրդու, ուրդուից հայերեն*	15000	15000
15	թարգմանություն՝ *հայերենից ուզբեկերեն, ուզբեկերենից հայերեն*	14500	17500

16	թարգմանություն՝ *հայերենից եբրայերեն, եբրայերենից հայերեն*	15000	18000

II Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը
Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և Կողմերի միջև կնքվող սույն պայմանագրի հիման վրա և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**Նշված չափաբաժիններով ընթացագարգը կայացել է և կնքվել է պայմանագիր:*

Միջին բարդության իրավաբանական թարգմանությունը՝ Պատվիրատուի կամ դատարանի կողմից հանձնարարված պատշաճ որակի թարգմանությունն է:

Լրացուցիչ պահանջներ՝

1. Թարգմանիչների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշմանը համապատասխան որակավորված համարվող անձ հանդիսանալը հավաստող համապատասխան փաստաթղթերը կցվում են յուրաքանչյուր թարգմանչական գործին:

2. Գրավոր թարգմանության դեպքում Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը՝ տեքստը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը և Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային և դրա էլեկտրոնային տարբերակներով:

3. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն առնվազն երկու օրինակից, իսկ Պատվիրատուի պահանջի դեպքում՝ նաև երեք օրինակից:

4. Թարգմանվող նյութերում կնիքի և ստորագրության առկայության դեպքում թարգմանությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

- ✓ Կնիքի առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Կնիք զինանշան> /կնիքի վրա առկա գրառումները չեն թարգմանվում/, /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի կնքված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում նույն կնիքը համապատասխան ձևով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի կնիքների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Ստորագրության առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Ստորագրություն> /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի ստորագրված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում ստորագրությունը համապատասխան լեզվով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի

ստորագրությունների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/

- ✓ Թարգմանության ներկայացված նյութերում առկա՝ մաթեմատիկական բանաձևերը, վիճակագրական դիագրամները, ֆինանսական կամ այլ հաշվարկների վերաբերյալ աղյուսակները, ինչպես նաև այն նշումները, որոնք թարգմանության արդյունքում փոփոխության չեն ենթարկվում, այսինքն՝ չեն թարգմանվում, ուստի չեն կարող հաշվարկվել որպես թարգմանված նյութի միավորներ:
- ✓ Եթե թարգմանության ներկայացված նյութերում առկա թվանշանների քանակը գերազանցում է 5 էջը, ապա դրանք թարգմանված փաստաթղթում արտացոլելու համար վճարվում է 5 էջին համարժեք չափով:

Ծանոթություն՝

1. Գրավոր թարգմանված նյութի մեկ միավորի գինը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի համար, այն պետք է բաղկացած լինի 1800 նիշից. բացատը նիշ չի համարվում:
2. Մինչև 1800 նիշից բաղկացած թարգմանված նյութի համար թարգմանված նյութի գնի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի (1800 նիշ) համար սահմանված գին /1800 x թարգմանված նյութի նիշերի քանակ:
3. Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 25 մմ, աջից 15 մմ և ձախից 30 մմ, Միջտողային միջակայքը՝ 1.5:
4. Բանավոր և խուլ համրերի համար սուրդո թարգմանությունը կատարվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը՝ Պատվիրատուի պահանջը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը: Նշված թարգմանությունների մեկ միավորի գինը հաշվարկվում է ժամով, որը ներառում է բացառապես դատական նիստի փաստացի տևողությունը:
5. Եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի: Եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես թարգմանչական էջը, բայց պակասում է մեկ թարգմանչական էջից, ապա այն հավասարեցվում է մեկ թարգմանչական էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես թարգմանչական էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես թարգմանչական էջի:
   Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացատով էջը, բացառությամբ չինարեն, կորեերեն, ճապոներեն լեզուների:

6. Գնման առարկա հանդիսացող թարգմանության ծառայությունները Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար ձեռքբերվող թարգմանության ծառայություններ են, որոնք մատուցվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում (ներառյալ՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում գործող Սյունիքի մարզի ընդհանուր

իրավասության դատարանի նստավայրը)։ Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը։

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ **ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5** **ՀՎՀՀ 02583241** **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** **Ղեկավար Կ. Փոլադյան** ----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.